կային առ նովաւ խորամանգք՝ նոքա ի դուրսն բան յղէին եթէ Պինդ կացէք և ուղեցէք զսա։ Եւ մուֆտին ոչ տվեալ ֆէթվա եթէ զայն առնիցեն, այլ ասացեալ թագաւորին թէ Բան չկայ, թագաւո՛ր, ոչ լիցի քեզ կոծ, բայց ահա՛ երկոքին հայքն մի են եղեալ, ոչ լուիցուք խօսից նոցա։ Զայս խօսս ի դուրս երթևեկքն առ ամբոխն, արծարծելով թէ Ձեզ մուֆտին զայս բան ասաց և արհամարհեաց զձեզ հայ ասելով։ Եւ զայս լըւեալ նոցա՝ նոյն ժամայն գիմեցին ի տուն մուֆտուն, այնպէս արարին՝ ոչ պակաս քան զվէզիրին, այլ յաւել ևս։ Եւ դարձան կրկին ի պալատն թագաւորի և ձայն ածէին առ հասարակ ի մի բերան, որ և ձայն աղաղակին լընոյր զքաղաքս ամենայն, համարէաք՝ թէ ի մօտս մեր ի ժամանակ առնելոյն զտունսն և ի ժամանակ զնա ուղելոյն, մինչև յահի լեալ թագաւորին սարսէր և վէզիրն ինքնին ասէր թագաւորին թէ Տո՛ւր զիս, արքա՛յ, զի՞ խռովեա զայսքան ամբոխս վասն մի ծառայիս քո և կամ դու զի՞ խռովիս, արքա՛յ, տո՛ւր զայս մի ծառայս անհամար ծառայից քո։ Եւ յարտասուս հարեալ թագաւորին լայր, ի խօսիցն վէզիրին փղձկեալ[1]) զմիչն համչէր և յանհուն ծառայիցն որք անլռելի գոռային ի դուռն՝ նա սարսէր, և ի վէզիրէն ամօթ կրէր զտալն. ծառայիցն սաստիկ հրաման տալով յետս դարձուցանելն չկարէր և ի վէզիրի խղճոյն տագնապէր. վասն որոյ և վէզիրն անկանէր լալով առ ոտս թագաւորին թէ Տո՛ւր զիս։ Եւ նոյն ժամայն սպասաւորք թագաւորին խեղդամահ արարեալ զնա՝ զգլուխն միայն ետուն ի դուրս առ ամբոխն։ Եւ նոցա առեալ զգլուխն՝ կաքաւելով երգէին ի վերայ նորա, և ի վերայ ձողի մի հանելով՝ զի երևիւր ամենեցուն. և ինքեանք ոչ

1) փղձկեալ.